

Ժողովուրդ

132
(2612)

20 սեպտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 94



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նախորդ շաբաթ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ հարձակման օրերին (սեպտեմբերի 13-ին), խորհրդարանում խոսեց Հայաստանի՝ զենք ձեռք բերելու խնդիրների մասին: Ըստ նրա՝ թեև Հայաստանը բավարար ֆինանսական միջոցներ ունի, բայց ոչ բոլորն են, որ պատրաստ են մեզ զենք վաճառել: Ասել է թե՛ փող ունենք, բայց զենք առնել չենք կարողանում:

«Մենք կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ն այսօր ունի բոլոր ֆինանսական հնարավորությունները՝ ձեռք բերելու իրեն անհրաժեշտ պաշտպանական զենք-զինամթերքը, բայց, բնականաբար, ոչ բոլոր երկրներն են, որ պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին»,- խորհրդարանում հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Սրանից երկու տարի առաջ՝ օգոստոսի 28-ին՝ Հուլիսյան մարտերից անմիջապես հետո, վարչապետ Փաշինյանը, երբ մարտերի մասնակիցներին պարզեցատրում էր 71 «Մարտական խաչով», նաեւ շեշտում էր. «Հուլիսյան հաղթական մարտերն ի ցույց դրեցին հայկական ռազմարդյունաբերության բարձր արդյունավետությունը եւ ապացուցեցին, որ մենք ունենք տեխնոլոգիական համաշխարհային քարտեզի վրա մեր պատվավոր եւ կայուն տեղն արձանագրելու հնարավորություն: Հայաստանի բանակը հասել է մարտավարական անսխալագույն բարձունքի, ինչն էլ ավելի է մեծացնում մեր վստահությունը, որ ունենք տարածաշրջանում որոշիչ ազդեցություն ունեցող մարտունակ եւ ինտելեկտուալ բանակ»:

Բազմավարական բարձունքներ գրանցած ու աշխարհում իր տեղն ունեցող բանակին (սրանք Փաշինյանի գնահատականներն են), փաստորեն, այսօր հրաժարվում են զենք վաճառել, ու դա արձանագրում է անձամբ երկրի ղեկավարը, որ անգամ բանակի մասին մանիպուլյացիաներ անելով՝ հերթական անգամ ստում է:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը խնամքով թաքցնում է իր կենսագրական տվյալները: Բոլորովին վերջերս, հիշեցնենք, հայտնի դարձավ, որ նա դուրս է մնացել հայ-ռուսական սլավոնական համալսարանից, «կտրվել է» քննությունից ու հեռացվել: Մինչդեռ, ՀՀ ԱԺ պաշտոնական կայքում մինչև այսօր նշված է, թե 2019-ին պատգամավորն ընդունվել է հայ-ռուսական սլավոնական համալսարանի մագիստրատուրա ու դեռ շարունակում է սովորել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ազգային ժողովի դարպասների առջև օրերս իշխանության դեմ հանրահավաք իրականացնողներին «ռազմաճակատ ու սահման» ուղարկելով սպառնացող Ալեքսանյանը թաքցրել է իր կենսագրության մի դրվագ եւս: Նա 2018-ին աշխատել է «Nacho Apart Hotel» հյուրանոցում: Վ. Ալեքսանյանը այս փոքրիկ հյուրանոցում մենեջեր է աշխատել: Այս մասին տեղեկանում ենք նրա մեկ այլ՝ ԿԸՀ-ում ներկայացված կենսագրությունից: Ինչհամար է իշխանական պատգամավորը իր կյանքի այդ դրվագը խնամքով թաքցրել. ամաչում է, որ հյուրանոցում է աշխատել: Նշենք, որ նույն այդ հյուրանոցում Վահագնի հետ աշխատել է նաեւ տիկտոկեր «222lava»-ն՝ անունը՝ էրին: Վերոնշյալ հյուրանոցը, նշենք, հիմնադրվել է 2018-ի իշխանափոխության օրերին՝ մայիսին, ու, ըստ երեւույթին, ընդամենը մեկ կամ մեկուկես տարի է գործել: 2019-ից հետո այդ հյուրանոցի Facebook-յան էջում որեւէ գրառում, հրապարակում կամ նորություն հրապարակված չէ, նշված հեռախոսահամարն էլ անհասանելի է: Հետեւաբար ենթադրել կարելի է, որ այն այժմ չի գործում: Հյուրանոցի մասին, ի դեպ, տարատեսակ կարծիքներ կան: Դատելով լուսանկարներից՝ այն ավելի շատ մոթելի գործառնայթ է կատարել՝ «ավանդական» մերսման ծառայություններ առաջարկելով հյուրերից որոշներին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ պահեստազորի սպաների միությունը դիմել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ միությունը գրավոր կամ բանավոր (հստակ ճշտել չհաջողվեց) հարցադրումներ է արել ՀՀ ԱԺ-ին եւ սպասում է պատասխանների: Իսկ ինչից հետո է ԱԺ պահեստազորի սպաների միությունը գնացել այդ քայլին: Բանն այն է, որ սեպտեմբերի 14-ին Ազգային ժողովում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով ԱԺ սպաների պահեստազորի սպաների միությանը, նրանց անվանել էր «խոպանջիների բրիգադ», ինչպես նաեւ նշել էր, որ նրանցով պետք է զբաղվի ԱԺ-ն՝ հասկանալու համար՝ քանի երկրի «շափոն» են նրանք: Այս հայտարարությունից հետո ԱԺ պահեստազորի սպաների միությունը արձագանքեց, բայց բավականին մեղմ: Միությունում, իրավիճակը գնահատելով, չեն ցանկացել արհեստական օրակարգ մտցված եւ իրենց վերաբերող այդ թեման շահարկման առարկա դարձնել: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ միությունը կոնկրետ քայլի է գնացել, եւ հայտարարությունից անմիջապես հետո դիմել են ԱԺ: Այս կառույցին մոտ կանգնած մեր աղբյուրների փոխանցմամբ՝ միությունը գրավոր կամ բանավոր կոնկրետ հարցեր է ուղղել եւ սպառնիչ պարզաբանում պահանջել, թե վարչապետի հայտարարության համար ի՞նչն է առիթ եղել, եւ կոնկրետ ո՞ւմ է հասցեագրված եղել էլույթը: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունը պարզել ԱԺ պահեստազորի սպաների միությունից, թե արդյո՞ք դիմել են ԱԺ, գրավոր են դիմել, թե՛ բանավոր, սակայն, միությունից հրաժարվեցին պատասխանել՝ նշելով, թե՛ բավարարվեց միության էջում արված հայտարարությամբ: Ինչեւէ, «Ժողովուրդ» օրաթերթը կշարունակի իր հետաքննությունը՝ հասկանալու համար ի վերջո ԱԺ-ն նման դիմում ստացել է, թե՛ ոչ է, եթե ստացել է, ապա ի՞նչ է պատասխանել:



ՀՀ կրթության տեսչական մարմնի տեսուչները հայտնվել են անհարմար դրության մեջ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ սեպտեմբերի 12-16-ն այս տեսչական մարմնի տեսուչների աշխատանքային այցն է նախատեսված եղել դեպի Վայոց ձորի մարզ: Սակայն սահմանային իրավիճակով պայմանավորված՝ նրանց աշխատանքային այցն ընդհատվել է, քանի որ տեսչական մարմնի տեղակալներից մեկը՝ Նարա Հովհաննիսյանը, զանգել է հետ է կանչել՝ ասելով, որ «պատերազմ է»: Տեսուչներն, իհարկե, Երեւան են վերադարձել, սակայն հետո վերադարձի պատճառով մասին բացատրագիր գրելու հետ կապված խնդիրներ են ծագել, քանի որ տեղակալը հրաժարվել է՝ նշելով, որ չի կարող բացատրագրում շարադրել պատերազմի մասին, քանի որ հիմքեր չունի: ՀՀ վարչապետը չի հայտարարել, որ պատերազմ է երկրում, հետեւաբար՝ իրավական հիմքեր չկան: Այժմ Վայոց ձորից ժամանակից շուտ վերադարձած տեսուչների բացատրության հարցը մնացել է օդում կախված: «Ժողովուրդ» օրաթերթը, պարզաբանում ստանալու նպատակով, զանգահարեց տեսչական մարմին: Մեր հեռախոսագրանգին պատասխանեց տեսչական մարմնի մյուս տեղակալը՝ Ռաիսա Գալստյանը՝ նշելով, «Ուղղակի այդ լրատվությունը լսելով՝ տեսչական մարմնի ղեկավարը անհանգստացել էր. առաջարկել էր տեսուչներին, որ եթե որեւէ բանով կաշկանդված չեն, եւ, եթե որեւէ խնդիր են տեսնում, ապա կարող են վերադառնալ: Տեսչական մարմնի ծառայողները մտածել են, որ եթե մարզում դասերը կան, ապա կարող են չվերադառնալ, բայց բոլոր դեպքերում անհանգստությունը մեծ էր, այստեղ լարված էր իրավիճակը, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը նորից զանգել է, եւ նորից առաջարկել՝ վերադառնալ: Նրանք վերադարձել են, եւ տեսչական մարմնում քննարկում ենք իրականացրել, իրենք ասել են, որ չեն տեսնում որեւէ խնդիր ու հիմա նորից հետ են գնացել մարզ»:



ԻՐԱՎԻՃԱԿ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ-Ն ՊԱՏՐԱՄՍ ՉԷՐ ԳԻՄԱՎՈՐԵԼ ՓԵԼՈՍԻԻՆ

ԼՈՒՌ ՈՒ «ԳԱՂՏՆԻ» ԲԱՐՈՋԱՐԵԱԿ

«Օղովորդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 13-ից սկսած Ադրբեջանական կողմի հարձակողական գործողությունները խառնել են իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրերը:

Սեպտեմբերի 25-ին, այնուամենայնիվ, Հայաստանի մի քանի համայնքներում կայանալիք տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությունները լինելու են: Ավելին՝ այս ընթացքում շատ կուսակցություններ, այդ թվում՝ նաև ՔՊ-ն, շարունակել են բակ առ բակ, տուն առ տուն քարոզարշավ անել, բայց չեն հանրայնացրել:

Այսպիսով, այս կիրակի ընտրությունները տեղի կունենան, սակայն իշխող ՔՊԿ-ի համագումարի օրվա մասով դեռ որոշում չկա:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

Երեկ Կարեն Դեմիրճյանի անվան մարզադպրոցային համալիրում ընթացավ հայ-ռուսական միջտարածաշրջանային 9-րդ համաժողովը: Սակայն համաժողովի ընթացքն ամբողջությամբ փակ էր լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:

ԱՄՆ ներկայացուցիչների ղալասի նախագահ Նենսի Փելոսիի եւ ՀՀ ԱԾ նախագահ Ալեն Սիմոնյանի մամուլի ասուլիսը բարունակում է Բննադատությունների եւ Բննարկումների առիթ լինել: Ինչ էլ որ ասելու լինենք, այս հարցում թերակասարունն ակնհայտն է: Այդ վարչությունը ողբ է կազմակերպի՝ ով որեւէ կանգնի, երբ խոսի, ինչից հետո ինչն է սկսվելու եւ այլն:

Չիղեցնեք, որ լրագրողների հետ ունեցած բարձրաստիճան ճեպագրույցի ընթացքում թարգմանության հետ կապված խնդիր առաջացավ: Նախ՝ կեսից սկսեց չափաատել հենց Նենսի Փելոսիին տրամադրված թարգմանության սարքը: Այն փոխելուց հետո խնդիրը դարձյալ չուժվեց, թարգմանությունը, ինչ-որ մի պահից սկսած, այլևս չէր լսվում նաև լրագրողների համար: Իսկ ինչից սկսվեց այս ամենը, նախ՝ ֆիքսեցք՝ ՀՀ ԱԾ նախագահ Ալեն Սիմոնյանը, երբ սկսեց իր բացման խոսքը, ԱՄՆ պատվիրակության ներկայացուցիչները դեռ չարունակում էին աստիճանների վրա քայլել, տեղավորվել: Արարողակարգում չէր կազմակերպվել, թե ով որտեղ պետք է կանգնի, ով ում կողքին կամ թիկունքին: Հետեւաբար նաև տեխնիկապես հնարավոր չէր արվել նախապես ստուգել սարքերը՝ աշխատողում են թարգմանչական ականջակալները, թե՛ ոչ: Սակայն ֆիքսեցք՝ ասուլիսից ժամեր առաջ ԱԾ նախագահի աշխատակազմի եւ հենց խորհրդարանի աշխատակազմի ներկայացուցիչներն այս ու այն կողմ էին վազվզում, անընդհատ ստուգումներ իրականացնում՝ մեկ-մեկ, երկու-երկու:

Այսպիսով, վայրկյաններ անց, երբ պարզվեց, որ թարգմանությունը չի լսվում, ԱՄՆ դեսպանության աշխատակիցները դուրս բերեցին թարգմանչուհուն եւ կանգնեցրեցին Փելոսիի կողքին, որպեսզի նա տեղում թարգմանություն իրականացնի: Սակայն, նկատեցք, որ Տիգրանուհուն ոչ ոք այդ պահին անգամ թուղթ ու գրիչ չսովեց, որպեսզի կարողանար աշխատել: Հետեւաբար սպասելի էր, որ անգամ ԱՄՆ դեսպանատան երկարամյա թարգմանիչը, որը հենց ԱՄՆ դեսպանի անձնական թարգմանիչն է, կարող էր սխալվել եւ չմտապահել երկար նախադասությունները: Այսպիսով, ստացվում է՝ սխալը սկսվեց առաջին հերթին՝ ԱԾ արարողակարգի խախտումներով, երբ ԱԾ



նախագահ Ալեն Սիմոնյանը, առանց սպասելու, սկսեց իր խոսքը, ինչից հետո էլ սկսվեցին տեխնիկական խնդիրները: Արարողակարգային կոպտագույն խախտումներ են արձանագրվել ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսիի այցի ընթացքում: Սկսեցք ՀՀ Ազգային ժողովից: Նախ՝ ովքեր էին գնացել դիմավորելու ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյայի գլխավորած պատվիրակությանը: ԱԾ նախագահ Ալեն Սիմոնյան, փոխնախագահ Ռուբեն Ռուբինյան, ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյան եւ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյան: Ի՞նչ սկզբունքով էին ընտրվել այս մարդիկ: Եթե ԱԾ մեծամասնության խմբակցության ղեկավարը կար, ինչու էլ չէր հրավիրել նաև մյուս երկու խմբակցությունների ղեկավարներին: Անհասկանալի է, եւ այցի մասցյալ օրերին նույն մարդիկ կան բոլոր լուսանկարներում: Ծիծեռնակաբերդ այցելությանը, արդեն, ՔՊ երկու պատգամավորներ էին միացել՝ Սոնա Ղազարյան, Մարիա Կարապետյան, ովքեր միացել էին՝ դարձյալ անհասկանալի ընտրությամբ: Այնուհետև Ազգային ժողովի շենքի առջև արված լուսանկարն ենք նայում, եւ ի՞նչ պալատի նախագահի եւ նրան ուղեկ

ող հայամետ կոնգրեսականների՝ Ֆրանկ Փալոնի, Ջեքի Սփիերի, Աննա Էշոուի եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լինսի Թրեյսիի կողքին դարձյալ Սիմոնյանն է կանգնած: Կանգնած են Ռուբինյանը, ԱԾ նախագահի ընկեր Հայկ Կոնջորյանը, ԱԾ աշխատակազմի ղեկավար Կահան Նարիբեկյանը եւ, անհասկանալի կերպով, կադրում հայտնվել է Ալեն Սիմոնյանի օգնականը: Այս պատկերից քննադատվեց միայն ԱԾ աշխատակազմի ղեկավարի հայտնությունը: Մինչդեռ արարողակարգային մնացյալ սխալները բազմաթիվ էին: Դառնանք Կառավարությանը. վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը անձամբ է դիմավորում Փելոսիին: Բայց տարակուսելին այն է, որ հետո մասնակցում է նաև Կառավարության ղեկավարի հանդիպմանը: Կառավարությունում են նաև Ռուբինյանը, Աղաջանյանը, Կոնջորյանը: Ինչու էին նրանք նաև Կառավարություն գնացել. հարցն ունի մեկ բացատրություն, որովհետև ՔՊ-ական են: Ահա այսպես, սիրողական մակարդակով կազմակերպվեց բարձրաստիճան ընդունելությունը, որը դեռ երկար կհիշվի արարողակարգային սեմինարներում, թե ինչպես չի կարելի աշխատել: ՄԱՐՈՒ ԴՈՎՅԱՆՆԻՍԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽԱՂԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Էլթոնի Բլիքենն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին կոչ է արել պահպանել հրադադարի ռեժիմը եւ հետ քաշել զորքերը: Այս մասին հաղորդագրություն է տարածել ԱՄՆ պետքարտուղարության կայքը՝ ներկայացնելով Էլթոնի Բլիքենի եւ Իլհամ Ալիևի հեռախոսային խոսակցության մանրամասները: «Պետքարտուղար Բլիքենն երեկ հեռախոսագրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ: Պետքարտուղարը ողջունել է Ադրբեջանի եւ Հայաստանի միջև վերջերս տեղի ունեցած ռազմական գործողությունների դադարեցումը: Նա նախագահ Ալիևին կոչ է արել պահպանել հրադադարի ռեժիմը, հետ քաշել զինված ուժերը եւ աշխատել Ադրբեջանի ու Հայաստանի միջև բոլոր չունձված հարցերը խաղաղ բանակցություններով:

րի միջոցով լուծելու ուղղությամբ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՄՈՍԿՎԱՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է

Պետկովը հայտարարել է, որ Մոսկվան ողջունում է Երեւանի եւ Բաքվի միջև կարգավորման տանող քայլերը: ԲԴ նախագահի մամուլ խոսնակ Դմիտրի Պետկովը հայտարարել է, որ Մոսկվան ողջունում է Երեւանի եւ Բաքվի միջև կարգավորման տանող քայլերը: «Այն ամենը, ինչն ոչ թե խոսքով է, այլ գործով է ոչ բարձրաձայն, ոչ պոպուլիստական, այլ իրականում անադմուկ ու գործնական, կարող է նպաստել հարաբերությունների կարգավորմանը, կարող է նպաստել սահմանին իրավիճակի կայունացմանը, սա կարելի է ողջունել: Արդյո՞ք նման արմկահարույց գործողություններն ու հայտարարությունները իրականում կարող են

նպաստել այս նորմալացմանը, մենք կտեսնենք: Ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզ կդառնա»:

ԳԵՄՊԱՆՆՈՐ ԶԵԼԱՆԻԱՑՈՒՄ

Նախագահ Վահագն Խաչատրյանը սեպտեմբերի 14-ին հրամանագիր է ստորագրել, որում ասվում է. «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի. ճապոնիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արեգ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻՆ, համատեղության կարգով, նշանակել Նոր Զելանդիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Տոկիո)»:

ՄԱՐԶ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ԶՊ կուսակցության ավագանու թեկնածուների 58 հոգանոց ցուցակի առաջին համարը՝ միասնական սոցիալական ծառայությունների Բերդի կենտրոնի տնօրեն Վահրամ Սուքիասյանը, 2017 թվականի նոյեմբերից մինչև 2022 թվականի մայիսի 19-ը եղել է Բերդ խոշորացված համայնքի ավագանու անդամ, սակայն չգիտի, որ սեպտեմբերի 25-ի ընտրություններում Բերդ համայնքի բնակիչները ընտրելու են ոչ թե Բերդի քաղաքային, այլ համայնքային իշխանություն: Իշխանամետ civic.am ինտերնետային կայքի պատրաստած նախընտրական, ԶՊ կուսակցությանը գովաբանող 11 րոպեանոց տեսանյութում 3 տեղ Վահրամ Սուքիասյանը խոսել է՝ ընտրություններում Բերդի քաղաքային նոր իշխանության ձեռավորման մասին, եւ ոչ մի տեղ չի խոսել համայնքային իշխանության ընտրության վերաբերյալ: Նշված տեսանյութում Վահրամ Սուքիասյանը ներկայացված է որպես 2020 թվականի աշնանը Արցախում տեղի ունեցած 44-օրյա պատերազմի մասնակից, մինչդեռ նա 2020 թվականի աշնանը չի եղել Արցախում, այլ պատերազմի 44 օրվա ընթացքում՝ ՍՕԲ-ի կազմում Բերդի տարածաշրջանի անտառներում, հերթապահություն է իրականացրել:

5-10 ՏԱՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Հարություն Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն գործառնախի ժամկետային զինծառայող, 2022 թվականի հուլիսի 12-ից ընդգրկված լինելով մարտական հերթապահության մեջ, 2022 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, գտնվելով հանգստացող հերթափոխում, օգտվելով համաժամայող զինվորի քնած լինելու հանգամանքից՝ սեքսուալ բնույթի գործողություն է կատարել վերջինիս նկատմամբ, այն է՝ իր սեռական կրքին հագուրդ տալու նպատակով, ձեռքով շոյել է համաժամայողի հետույքը: Հ. Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Սույն հոդվածը՝ որպես պատիժ, նախատեսում է 5-10 տարի ազատազրկում: Հ. Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել զինվորական հսկողության հանձնումը: Սեպտեմբերի 8-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մարտիրոսյանը որոշել է ստանձնել նշված քրեական գործի վարումը եւ նախնական դատական լուսմներ է նշանակել 2022թ. սեպտեմբերի 14-ին, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջեան քաղաքի նստավայրում այդ գործով հաջորդ նիստը նշանակված է սեպտեմբերի 27-ին:

ՈՍՎԱՆ ՍՍՐԳՅԱՆ Տավուշ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱԳՐԵՋԱՆԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹ

«Տելեգրամ» սոցիալական ցանցի ադրբեջանական սիրույթում չաք բոթերի միջոցով ստեղծվել են հայ զինծառայողների, քաղաքացիական անձանց խոսքերը ու մասնավորապես մարմինների լուսանկարների sticker-ներ: Տեղեկությունը հայտնում է ՀՀ մարդու իրավունքների նախկին դաժնուհան Մրման Թաթայանը:

«Ստիկերները ստեղծվել են 2022 սեպտեմբերի 14-ին, բայց մենք այն հայտնաբերել ենք սեպտեմբերի 18-ին: Ստեղծվելուց անմիջապես հետո դրանք դարձել են լայն հասանելի՝ ցանկացած անձի հնարավորություն տալով բեռնել եւ օգտագործել հաղորդակցության ժամանակ: Մենք արձանագրել ենք 119 լուսանկար, այսինքն՝ 119 sticker, որը 5 օրում ունեցել է առավել, քան 20 000 ներբեռում: Այսինքն՝ 20 000 ադրբեջանական օգտատեր ընդամենը 5 օրվա ընթացքում ներբեռնել է լուսանկարները «Տելեգրամի» իր հաշվին», - այս մասին գրել է Թաթայանը:

Իրավապաշտպանը նշել է, որ մասնագետի ջանքերով, «Տելեգրամը» փակել է այդ հնարավորությունը, բայց ակնհայտ է, որ այս նոր գործիքն ադրբեջանական հարթակներն օգտագործելու են հայ հասարակությանն ահաբեկելու, ծաղրելու նպատակով:

Sticker-ներում օգտագործվել են վայրագությունների լուսանկարներ, որոնք տեղի են ունեցել ինչպես Արցախյան 44-օրյա պատերազմի, այնպես էլ 2022թ. սեպտեմբերի 13-15-ը Հայաստանի նկատմամբ ագրեսիայի ժամանակ:

«Մեր ուսումնասիրությունը վկայում է, որ ադրբեջանական օգտատերերը, որոնք ներբեռնել են այդ լուսանկարները, մեծ ցնծությամբ են ընդունել հայ զինծառայողների, քաղաքացիական անձանց խոշտանգումների, մարմինների մասնատումների լուսանկարները՝ դրանք առօրյա հաղորդակցության, տարբեր քննարկումների ժամանակ օգտագործելու հնարավորության համար», - նշել է նախկին պաշտպանը:



ություն համար», - նշել է նախկին պաշտպանը:

Թաթայանը նկատել է՝ այս հանցավոր արարքը եւս մեկ ապացույց է, որ ադրբեջանական իշխանությունների կողմից տասնամյակներով հովանավորվող հայատյացության քաղաքականությունն արմատավորվել է ադրբեջանական հասարակությունում, եւ ադրբեջանական իշխանությունների կողմից հնչող խաղաղասիրության կոչերն ուղղակի շղարշ են միջազգային հանրության աչքերի համար, որով թաքցնում են իրենց իրական մտադրությունները:

Հիշեցնենք՝ Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները սեպտեմբերի 13-ից Գորիսի, Սյունիքի եւ Զեյրուկի ուղղությամբ ինտենսիվ կրակ էին վարում հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից: Հակառակորդը կիրառում էր նաեւ ԱՌՍ-ներ:

Հայաստանի տարածք ներխուժած ադրբեջանական ուժերը վայրագություններ են կատարել, մասնատել են կին զինծառայողին, կտրել ոտքերը, մատները,

մերկացրել նրան: «Հայկական մամուլի միջոցներով եւ սոցիալական ցանցերով ակտիվ տարածվում է զոհված հայ կին զինծառայողի՝ կտտանքների ենթարկված մարմինը պատկերող տեսանյութը, որը ծայրահեղ ցնիզմով արվել է այդ ծանր հանցանքը ենթադրաբար կատարած ադրբեջանցի զինծառայողի կողմից: Այդ տեսանյութը, զինծառայողի սեռն ու էթնիկ պատկանելիությունը թիրախավորելով ու արատավորելով, ակտիվ տարածվում է ադրբեջանական մեդիա տիրույթներում՝ առաջացնելով ադրբեջանցի օգտատերերի «հիացմունքն ու գովեստը»: Ադրբեջանական մեդիա տիրույթի դեպքում սա իհարկե ունի իր ակնհայտ բացատրությունը՝ էթնիկ հայի նկատմամբ ծայրահեղ ատելությունը, որը գեներացվել ու սնուցվում է ի թիվս այլնի նման ագրեսիվ հարձակումներով ու տասնամյակների համակարգային քաղաքականությամբ:

Սեպտեմբերի 14-ից՝ ժամը 20:00-ից, հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով հրադատարի ռեժիմ է սահմանվել, որը պահպանվում է մինչ այս պահը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՐԻՔԻ ՀՆՎԱՔԱԳՐՈՒՄ

ՀՀ սուվերեն սահմանի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի դասճառով ժամանակավորապես սեղանանված քաղաքացիների կարիքները Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից ստեղծված՝ «Առաջնային կարիքի հավաքագրման հարթակի» միջոցով բարենայնություն են գույքագրվել եւ բավարարվել:

Նախարարությունից հայտնում են, որ թեպետ պատասխանատու գերատեսչությունների կողմից տարածված հայտարարություններին այն մասին, որ այս պահին առկա ռեսուրսները բավարար են, այնուամենայնիվ, մի շարք սոցիալական նախաձեռնություններ եւ հասարակական կազմակերպություններ հավաքագրել են որոշ աջակցություն կամ ունեն ռեսուրսներ, որոնք ուզում են ծառայեցնել՝ որպես օգնություն:

Այսպիսով, առկա ռեսուրսները գույքագրելու եւ դրանց հետագա կիրառումը պլանավորելու նպատակով՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը գործարկել է «Սոցիալական աջակցության ծառայությունների քարտեզ» (հղումը՝ <https://bit.ly/3BuiVL4>), որը ֆիզիկական անձանց եւ կազմակերպություններին հնարավորություն կտա մեկտեղել ռեսուրսները՝ դրանք գրանցելով համակարգում: Հավաքագրված տվյալները հասանելի կլինեն մարզպետարանների, ՏԻՄ-երի եւ ԱՍՀՆ համար՝ ըստ անհրաժեշտության՝ աջակցությունը համակարգելու եւ ըստ նպատակի տրամադրելու համար:

Համակարգում գրանցվելու համար անհրաժեշտ է մուտք գործել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության www.socservice.am պաշտոնական կայքի «Սոցիալական աջակցություն» բաժին եւ ընտրել «Սոցիալական աջակցության ծառայությունների քարտեզ» պատուհանը:

Համապատասխան դաշտերում պահանջվող տվյալները լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Գրանցում» կոճակը, որից հետո աջակցություն առաջարկող օգտահաշվի ակտիվացման տվյալները կուղարկվեն նշված էլեկտրոնային հասցեին. հաղորդագրությունն ստանալուց հետո անհրաժեշտ է սեղմել նամակում առկա հղումը:

Օգտահաշիվը ակտիվացնելուց եւ համակարգ մուտք գործելուց հետո անձը կամ կազմակերպությունը հնարավորություն կունենա լրացնել առաջարկվող աջակցության վերաբերյալ տեղեկատվությունը: Այս դեպքում անհրաժեշտ է սեղմել «Ավելացնել» կոճակը, բացված ձեւաթղթում լրացնել պահանջվող բոլոր տվյալները, ապա ընտրել «Հաստատել» սեղմակը: Մեկից ավելի մարզերում աջակցություն տրամադրելու դեպքում անհրաժեշտ է սեղմել «Կանաչ այլուս» կոճակը եւ կրկնել նույն գործողությունները:

«Սոցիալական աջակցության ծառայությունների քարտեզի» միջոցով համատեղ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ պատրաստ ենք լսել սոցիալական նախաձեռնությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առաջարկներն ու դիտարկումները:

«Սոցիալական աջակցության ծառայությունների քարտեզի» միջոցով համատեղ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ պատրաստ ենք լսել սոցիալական նախաձեռնությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առաջարկներն ու դիտարկումները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԾԻՔ

«ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԼՈՒՍԱԲԱՅՁ»

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ազգային կինոակադեմիան «Օսկար» 95-րդ մրցանակաբաժնի «Լավագույն օտարալեզու ֆիլմ» անվանակարգին Հայաստանի կողմից առաջադրվելու համար ընտրել է ռեժիսոր Իննա Սահակյանի «Արշալույսի լուսաբացը» վավերագրական-անիմացիոն ֆիլմը: Այս մասին հաղորդագրություն է հրատարակվել ֆիլմի «Ֆեյսբուքի» դասեռնական էջում:

«Այժմ, առավել քան երբևէ, կարևոր է, որ Հայոց ցեղասպանությունը վերապրածների ծայնները, ինչպես Ավորայինը, լսելի դառնան», -ասվում է տեքստում:

Ֆիլմը ստեղծվել է Զորյան ինստիտուտի գիտական աջակցությամբ և Զորյան ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի հիման վրա:

«Արշալույսի լուսաբացը» ստեղծվել է «Բարս Սեդիա»-ի կողմից (Հայաստան), Gebruder Beetz Filmproduktion-ի (Գերմանիա) և Artbox Laisvalaikio Klubas (Լիտվա) հետ համատեղ արտադրությամբ: «Մենք շնորհակալություն ենք հայտնում Eurimages-ին, Հայաստանի Ազգային կինոկենտրոնին, Լիտվայի կինոկենտրոնին, Arte/ZDF-ին, ինչպես նաև բոլոր այլ ֆոնդերին, դրամաշնորհներին և հիմնադրամներին, ովքեր օգնել են այս ֆիլմի արտադրությանը», -նշված է հաղորդագրության մեջ:

Ոչ միայն հանգամանքները, այլև ապրելու համար պայքարելու մեծ կամքն են Արշալույս Մարտիրոսյանի (Ավորային Մարտիրոսյան) 1915 թվականին փրկել Հայոց ցեղասպանությունից, հնարավորություն տվել հաստատվել օտար երկրում և առաջ գնալ՝ հաղթահարելով բոլոր փորձությունները:

«Արշալույսի լուսաբացը» վավերագրական-անիմացիոն ֆիլմը հետաքրքիր մանրամասներ է բացահայտում Ավորայինի մասին՝ լսարանին հորդորելով չհանձնվել ոչ մի պարագայում և փորձել ճիշտ կողմնորոշվել անգամ ամենադժգոյն իրավիճակներում:

Ֆիլմը, որի պրեմիերան կայացել է Ֆրանսիայում «Անսի» միջազգային հեղինակավոր անիմացիոն ֆիլմերի փառատոնում, ցուցադրվել է Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի 2022-ի հուլիսի 10-17-ը և արժանացել է արծաթե ծիրանի:



Նակավոր անիմացիոն ֆիլմերի փառատոնում, ցուցադրվել է Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի 2022-ի հուլիսի 10-17-ը և արժանացել է արծաթե ծիրանի:

ԼՈՒՐԵՐ

ԱՆՊՐԱԳԱՐՉ Ի ԼՈՒՐ ԱՃԵՄԱՐՔԻ

Բրիտանացի երաժիշտ, լեգենդար Queen խմբի կիթառահար Բրայան Մեյն աշխարհի ուշադրությունը հրավիրել է Հայաստանի դեմ Ադրբեյջանի սանձազերծած վերջին հարձակումների վրա:

«Ես խախտում եմ իմ լռությունն այստեղ, քանի որ կարծես թե մի կողմից հարձակումներ են ծավալվում, ու կա վտանգ, որ ինչպես միշտ այս օրերին, մեդիան այս մասին ճշմարտացի կերպով չի հաղորդի», - այս մասին գրել է Մեյը: Նա ընդգծել է, որ Հայաստանը փոքր երկիր է, որը չունի նավթի կամ գազի պաշարներ, քրիստոնեության և ժողովրդավարության կրթական է՝ շրջապատված բռնապետական երկրների կողմից:

«Սա աշխարհի ամենախաղաղասեր երկրներից մեկն է՝ խորը ամբարված տիրության մի շարքում: Առաջին աշխարհամարտի տարիներին 1,2 մլն հայեր սպանվեցին, Օսմանյան կայսրությունում վայրագ էթնիկ զտման գործողություն, որը մինչ օրս հերքվում է Թուրքիայի կողմից: Այսօր Հայաստանը կրկին սպանալիքի տակ է՝ դավադրություն, որի նպատակն է աշխարհի երեսից ջնջելու այդ երկիրը: Երկու օր առաջ Հայաստանի սահմանի խաղաղ գյուղերը հրետակոծվեցին Ադրբեյջանի կողմից, հարձակում, որի նպատակն էր ահաբեկելու հայ ժողովրդին ու ապակայունացնելու իրավիճակը», - նշել է Մեյը՝ ընդգծելով, որ Հայաստանը մնացել է միայնակ բռնապետությունների դեմ և կարիք ունի լիակատար աջակցության Արեւմուտքի կողմից:

Բրիտանացի լեգենդար կիթառահարը կիսվել է Հայաստանի դեմ Ադրբեյջանի հարձակման մասին System Of a Down խմբի մենակատար Սերժ Թանկյանի գրառմամբ: «Աշխարհը պետք է իմանա, թե ինչ է կատարվում. խնդրում եմ տարածեք սա՝ հակադրվելով կեղծ ինֆորմացիային, որը ակտիվորեն տարածում են Ադրբեյջանն ու նրա դաշնակիցները՝ փորձելով Հայաստանին ներկայացնել որպես ագրեսոր՝ ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանը փորձեց անմեղ ուկրաինացիներին ներակայացնել ագրեսոր: Աշխարհում, որտեղ գերիշխում է սուտը, մենք բոլորս պետք է սատար կանգնենք ճշմարտությանն ու արդարությանը», - նշել է Մեյը:

ՀԱՂԹԵԼ Է 6 ԽԱՂՈՒՄ

Հայաստանի լրագրողների ֆուտբոլի հավաքականն առաջին անգամ հաղթել է Լիտվայի Դրուսկինիկայ քաղաքում կայացած ավանդական միջազգային մրցաշարում, որն այս տարի անցկացվել է արդեն 17-րդ անգամ:

Հայաստանի թիմը վաստակել է 18 միավոր՝ հաղթելով 6 խաղում և պարտվելով մեկում:

Երկրորդ տեղը 16 միավորով զբաղեցրել է Լիտվայի թիմը, երրորդը՝ 14 միավորով՝ Կառուսի: Միջոցառմանն այս տարի մասնակցել են 8 լրագրողական թիմեր, այդ թվում՝ Հայաստանից, Գերմանիայից, Լիտվայից, Լատվիայից, Բելառուսից, Լեհաստանից և Ուկրաինայից:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՌԱՎԱՐ ՌԵՍՈՒՑՈՒՄ

Հայաստանի Գեղարքունիքի մարզի սահմանային մի շարք համայնքներում դասապրոցներ մեկ շաբաթ կիրականացվի հեռակա՝ պայմանավորված վերջին օրերին Ադրբեյջանի հարձակմամբ: Այս մասին ArmLur.am-ին ասաց Գեղարքունիքի մարզի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կարեն Զաքյանը:

«Հեռավար ուսուցման են անցել մարզի 12 դպրոց: Կուրթի, Նորաբակի, Սոթքի, Գեղամասարի, Շատշրեքի, Զաղացաձորի, Շատվանի, Խաչաղբյուրի, Ազատի և Վարդենիսի թիվ 2 միջնակարգ դպրոցները: Նախատեսված է մեկ շաբաթ, որից հետո պարզ կդառնա կշարունակեն հեռավար, թե առկա: Կախված է անվտանգությունից», - նշեց մեր գրուցակիցը:

Նշենք, որ սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերն Ադրբեյջանը լայնածավալ հարձակում էր գործել Հայաստանի Հանրապետության վրա:

«ՎԱՆԵՆՔ ԶԱՐՆ ՈՒ ՆԱԽԱՆՉԸ»

Հայաստանում սահմանային լարված և պատերազմական վիճակով պայմանավորված՝ իր կղն է հղել համայն հայությանը նաև ՀՀ վաստակավոր երգիչ, ազգային երգերի կատարող Ներսիկ Իսախանյանը:

Նա ArmLur.am-ի հետ զրույցում նշեց. «Նախ խոնարհումս բոլոր նահատակված հերոսներին և իրենց ընտանիքներին... հազար փառք... Վիրավորներին շուտափույթ ապաքինում... Մեր առյուծների շնորհիվ կասեցվեց թշնամին. բայց...»

Կոչս եւ խնդրանքս եմ ուղղում Հայաստանում և աշխարհում ապրող մեծահարուստ և հնարավորություն ունեցող հայրենակիցներին:

Թշնամին ընդամենը 60 կմ է հեռու Երեւանից... տասնյակ հազարավոր զորք՝ մինչև ատամները զինված ու հային աշխարհի երեսից ջնջելու նպատակով սպասում է հարձակման...:

Խնդրանքս. Ձեր ներդրումն ունեցեք, կանգնեք հայոց բանակի կողքին...թողեք բոլոր տարածաշրջաններն այս պահին...»

Միտելի հայրենակից, այս օրհասական պահին տանը նստած սոցցանցում մի զբաղվիր ինքնագովազդով, թե՛ ինչքան ես սիրում հայրենիքը, թե՛ ինչերի ես պատրաստ...լուռ սիրիր և պետք եղիր...մի փնտրիր եւ ատիր ուրիշ հայրենակցիդ՝ ինքդ տանը նստած, որ նա դեռ չի գնացել սահման ու չի զոհվել...Վանեք չարն ու նախանձը մեր մեջից... Համախմբվեք...միմյանց լրացնեք...Աստուծով լցվեք...զգոն լինեք...մի բռունցք դառնանք...թշնամին սարսափում է հայի միասնությունից...»

Նշենք, որ սեպտեմբերի 12-ին լույս 13-ի գիշերը Ադրբեյջանը հարձակվել է Հայաստանի Հանրապետության վրա, որի արդյունքում ունեցվեց մի քանի տասնյակ զոհ և վիրավոր, ինչպես նաև գերեւարված զինվորներ:


ԼԻՂՎ ԵՐԿՐԱՋՈՒՅԱԼՍ

● Սեպտեմբերի 20-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ 19:00:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ սկզբունքով է վճարվում դակաս վճարված նոյասի վճարումը:
Ռիտա Մինասյան (24 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման: Ընդ որում, վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Վարձու աշխատողի մայրության նպաստը վերահաշվարկվում է նաեւ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում իր եկամտի վերաբերյալ վարձու աշխատողի կողմից գործատուին (նպաստը հաշվարկող եւ վճարող) լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Այս դեպքում մայրության նպաստը վճարվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ լիազոր մարմնի որոշմամբ, եթե նպաստը նշանակվել է վճարվել է հաշվարկային մեխանիզմի սխալների կամ նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում, հետպահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող նպաստի կամ աշխատավարձի 20 տոկոսը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է վճռաբեկ դատարանի իրավասությունը:
Գեղամ Գալստյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

- 1) ապահովում է օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:
- 2) վերացնում է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները:

Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

ՀՀ ընդհանուր իրավասության դատարան

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով՝ Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գավառ-Վարդենիս ավտոճանապարհին



Քաղաքացին, կարծես, աստվածաշնչյան խոսքը քարոզելու հետաքրքիր տարբերակ է գտել. այս կերպ նա ցանկանում է հիշեցնել մարդկանց ապաշխարության կարեւորությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկիստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.
«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.09.2022**

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: